Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-232[89]-11.04.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մայիսի 5-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «ազատության սահմանափակումը,» բառերը հանել:

Հոդված 2. Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունը «ժամկետից» բառից հետո լրացնել «կամ նշանակված պատժատեսակն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված առավել խիստ պատժատեսակից» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 11-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո չգտնվող կամ տարբերանշանը չկրող քաղաքացիական օդանավի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով.

«3. Հայաստանի Հանրապետության ռազմական կամ կառավարական նավի կամ պետական օդանավի կամ այլ թռչող սարքի (ռազմական, ոստիկանական, մաքսային) վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը, անկախ դրա գտնվելու վայրից, լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 13-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մասով.

«4. Սույն հոդվածով նախատեսված կանոնները կիրառվում են համապատասխան դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելուց հետո:»:

Հոդված 5. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասում «, 266-րդ հոդվածով, 341-րդ հոդվածի 1-ին մասով կամ 342-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել « կամ 266-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում «ազատազրկման» բառը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության այն դեպքում, երբ չի գիտակցել իր արարքի հակահիրավականությունը և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել դա, ինչպես նաև այն դեպքում, երբ չի նախատեսել իր արարքի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և տվյալ իրադրությունում պարտավոր չէր կամ չէր կարող նախատեսել դա:»:

Հոդված 8. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում «հանցանքը համարվում» բառերից և «կատարված հանցանքն» բառերից հետո «առանձնապես ծանր» բառերը փոխարինել «առանձնապես ծանր կամ ծանր» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 6-րդ մասում «զրկելն», «տարածվում է» և «սկսվում է» բառերից հետո «ազատազրկման» բառը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 62-րդ հոդվածում՝

1) 4-րդ և 5-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է դատապարտյալի նկատմամբ նշանակված հիմնական պատիժը կրելուց հետո: Այն դեպքում, երբ արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով համաձայնություն է ձեռք բերում դատապարտյալին պատժի մնացած մասը կրելու նպատակով իր քաղաքացիության երկիր փոխանցելու վերաբերյալ, ապա օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը համարվում է ի կատար ածված դատապարտյալի փոխանցումն իրականացնելու մասին արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմնի ծանուցումն ստանալուց հետո: Այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 84-րդ կամ 85-րդ հոդվածով սահմանված կարգով կայացվել է անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշում, օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է փորձաշրջանն ավարտվելուց հետո: Սույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում անձին պատժի հետագա կրումից ազատելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասով կամ 88-րդ հոդվածով սահմանված կարգով անձին հիմնական պատժից ազատելու դեպքում օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է պատժի հետագա կրումից կամ պատժից ազատելուց հետո:

5. Օտարերկրյա քաղաքացին կարող է վտարվել իր քաղաքացիության պետություն կամ այն պետություն, որտեղ վերջինս մշտապես բնակվում է: Վտարման երկիրը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով դատապարտյալի կարծիքը:».

2) լրացնել 6-րդ և 7-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Այս պատժատեսակը չի կարող նշանակվել՝

1) փախստականի կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած անձի նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,

2) չվերադարձելիության սկզբունքից օգտվող օտարերկրյա քաղաքացու նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,

3) մինչև հանցանք կատարելը Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում հատուկ կացության կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող անձի հետ ամուսնացած կամ խնամքին Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա ունեցող անձի նկատմամբ,

4) եթե անձը վտարվող պետության տարածքում քրեական հետապնդման է ենթարկվում այնպիսի արարքի համար, որը կարող է պատժվել մահապատժով,

5) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է հետապնդման ենթարկվել ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար, կամ

6) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է ենթարկվել խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

7. Հայաստանի Հանրապետությունից չեն կարող վտարվել այն անձինք, որոնց նկատմամբ նշանակվել է սույն հոդվածով նախատեսված պատիժը, սակայն մինչև պատժի կատարումը դատապարտյալը ձեռք է բերել փախստականի կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացածի կարգավիճակ, կամ նրա նկատմամբ հաստատվել է չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 11. Օրենսգրքի 63-րդ հոդվածի 5-րդ մասում «տուգանքի» բառը փոխարինել «սույն օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տուգանքի» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 64-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Սույն հոդվածի իմաստով պատժից խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը երկու և ավելի անգամ խախտել է դատարանի սահմանած արգելքը:»:

Հոդված 13. Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում «Ազատազրկման» բառը փոխարինել «Ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 14. Օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասում «եթե դա կապված չէ ազատազրկման հետ» բառերը փոխարինել «բացառությամբ ազատազրկման ձևով վերջնական պատժի» բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 82-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մասով.

«5. Նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից:»:

Հոդված 16. Օրենսգրքի 83-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «անձին որպես մեղադրյալ ներգրավելու» բառերը փոխարինել «անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու» բառերով:

2) 10-րդ մասում «հանցագործություններ» բառը փոխարինել «հանցանքներ» բառով:

Հոդված 17. Օրենսգրքի 86-րդ հոդվածի վերնագրում «Պատժի» բառը փոխարինել «Հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի պատժի» բառերով.

Հոդված 18. Օրենսգրքի 87-րդ հոդվածի 5-րդ մասում «բժշկական հանձնաժողովը» բառերը փոխարինել «բժշկական կամ հոգեբուժական հանձնաժողովը» բառերով:

Հոդված 19. Օրենսգրքի 90-րդ հոդվածի 7-րդ մասում «հանցանքի կատարման» բառերը փոխարինել «մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու» բառերով:

Հոդված 20. Օրենսգրքի 93-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածության մարման կամ վերացման պահը: Դատվածության վերացման համար հիմք են համաներման մասին օրենքը, ինչպես նաև արարքի ապաքրեականացումը:»:

2) 5-րդ մասի 2-րդ կետում «ազատազրկման» բառը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 21. Օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունը հանել:

Հոդված 22. Օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասում «եթե դա կապված չէ ազատազրկման հետ» բառերը փոխարինել «բացառությամբ ազատազրկման ձևով վերջնական պատժի» բառերով:

Հոդված 23. Օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի «ազատազրկման» բառերը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 24. Օրենսգրքի 119-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մասով.

«5. Անձը որոշակի վայրեր այցելելու արգելքի պահանջները կատարելուց խուսափող է համարվում, եթե երկու և ավելի անգամ խախտել է դատարանի սահմանած արգելքը:»:

Հոդված 25. Օրենսգրքի 120-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից «պետության սահմանած» բառերը հանել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մաս.

«5. Անձը հոգեբանական օգնություն ստանալու պարտականության պահանջները կատարելուց խուսափող է համարվում, եթե երկու և ավելի անգամ չի կատարում դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «137-րդ հոդվածի» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 137-րդ հոդվածի» բառերով:

Հոդված 27. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասում «հուզմունքի վիճակում (աֆեկտ)» բառերը փոխարինել «հուզմունքի (աֆեկտի) վիճակում» բառերով:

Հոդված 28. Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում «իր» բառը փոխարինել «իրենից ծնված» բառերով:

Հոդված 29. Օրենսգրքի 166-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 166. Առողջությանը ծանր վնաս պատճառելը**

1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելը, որը՝

1) վտանգավոր է կյանքի համար,

2) առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ դրա գործառույթի կորուստ,

3) արտահայտվել է դեմքի, գլխի, ականջի կամ կզակի անջնջելի այլանդակմամբ,

4) առաջացրել է առողջության քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով,

5) առաջացրել է հղիության ընդհատում կամ

6) առաջացրել է հոգեկան խանգարում, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) անչափահասի նկատմամբ,

3) առանձին դաժանությամբ,

4) այլ անձանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր եղանակով,

5) մի խումբ անձանց կողմից,

6) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

7) մերձավոր ազգականի կողմից,

8) շահադիտական դրդումներով,

9) պատվերով,

10) խուլիգանական դրդումներով,

11) այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով,

12) ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով,

13) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով,

14) հանցագործությունից տուժած անձի բջիջը, հյուսվածքը, օրգանը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելու նպատակով կամ

15) անզգուշությամբ առաջացնելով հանցագործությունից տուժած անձի մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:»:

Հոդված 30. Օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասում «տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ» բառերը հանել:

Հոդված 31. Օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասում «կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը» բառերից հետո «երկու» բառը փոխարինել «մեկ» բառով:

Հոդված 32. Օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասում «տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ» բառերը հանել:

Հոդված 33. Օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասում «տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ» բառերը հանել:

Հոդված 34. Օրենսգրքի 198-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 12 տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:».

2) լրացնել նոր՝ 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն հոդվածի իմաստով՝ անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը:»:

Հոդված 35. Օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից հանել «12-ից» բառը:

Հոդված 36. Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասում «ոտնահարում է անձի պատիվն ու արժանապատվությունը կամ իրավունքներն ու ազատությունները» բառերը փոխարինել «ոտնահարում է անձի իրավունքները կամ ազատությունները» բառերով:

Հոդված 37. Օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ մասը «մասնակցելուց» բառից առաջ լրացնել «մասնակցելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը» բառերով:

Հոդված 38. Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասում «նվազագույն աշխատավարձի եռապատիկը» բառերը փոխարինել «3000 Հայաստանի Հանրապետության դրամը» բառերով:

Հոդված 39. Օրենսգիրքը լրացնել նոր 221.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 221.1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը

1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից խոշոր չափով չկատարելը կամ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրում քարոզչության նպատակով ձեռք բերված ապրանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չներառելը (եթե դա ձեռք է բերվել կամ մատուցվել է անհատույց կամ շուկայական արժեքից ցածր գնով կամ մինչև նախընտրական հիմնադրամի կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամի ձևավորումը), որը կազմել է խոշոր չափ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

2. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կամ հանրաքվեի քարոզչության հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը

քվեարկությունից հետո օրենքով՝ ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ ընկած ժամանակահատվածում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ խոշոր չափ է համարվում 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը:»:

Հոդված 40. Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասում «նվազագույն աշխատավարձի հազարապատիկը» բառերը փոխարինել «1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը» բառերով:

Հոդված 41.Օրենսգրքի 236-րդ հոդվածի՝

1) վերնագրում «հարկադրելը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» բառերը.

2) 2-րդ մասում «միջոցով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» բառերը:

Հոդված 42. Օրենսգրքի 242-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «Երեխայի առքը կամ վաճառքը» բառերը փոխարինել «Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը» բառերով:

Հոդված 43. Օրենսգրքի 284-րդ հոդվածի 4-րդ մասում «մինչև 5» բառերը փոխարինել «5 միլիոնից մինչև 10» բառերով, իսկ «շահույթ՝» բառից հետո «5» թիվը՝ «10» թվով:

Հոդված 44. Օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասում «իրավունք ունեցող անձի,» բառերից հետո լրացնել « ֆիզիկական անձի,» բառերը:

Հոդված 45. Օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասում «մարմնի կողմից» բառերից հետո լրացնել «սեփականությամբ տվյալ ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պատկանող գույքը ոչնչացնելու, ակնհայտ կեղծ կամ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով» բառերը:

Հոդված 46. Օրենսգրքի 289-րդ հոդվածի՝

1) վերնագրում «կամ օգտագործելը կամ դրանք իրացնելը» բառերը փոխարինել «կամ դրանք օգտագործելը կամ իրացնելը» բառերով.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Իրացման նպատակով կեղծ ակցիզային դրոշմանիշ կամ դրոշմապիտակ պատրաստելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք օգտագործելը կամ իրացնելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Հոդված 47. Օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասում «5» թիվը փոխարինել «10» թվով, իսկ «15» թիվը՝ «20» թվով:

Հոդված 48. Օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Խուլիգանությունը՝ հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելը, որը դրսևորվել է անձին ստորացնելով կամ հայհոյանքներով կամ անպարկեշտ արտահայտություններով կամ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելով կամ նույն եղանակներով հանրային միջոցառումը, արարողությունը խափանելով կամ հասարակական նշանակության օբյեկտի, հիմնարկի կամ կազմակերպության բնականոն աշխատանքը խոչընդոտելով՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Հոդված 49. Օրենսգրքի 310-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի իմաստով՝ գույք է համարվում սույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գույքը:»:

Հոդված 50. Օրենսգրքի 326-րդ հոդվածում՝

1)1-ին մասում «երկու» բառը փոխարինել «մեկ» բառով.

2) 2-րդ մասում «մեկից երկու» բառերը փոխարինել «առավելագույնը երկու» բառերով.

3) լրացնել նոր՝ 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:»:

Հոդված 51. Օրենսգրքի 344-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 344. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը կամ այդ անձի կամ տրանսպորտային**

միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը

1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրասպորտային միջոց վարելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

2. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ այդ անձի կողմից սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված, եթե նա օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, և զրկման ժամկետը չի լրացել:

4. Սույն օրենսգրքի իմաստով՝ անձի՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը համարվում է կասեցված, եթե նրա՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցվել է, և կասեցման ժամկետը չի լրացել:

5. Սույն օրենսգրքի իմաստով՝ անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող, եթե նա սահմանված կարգով չի ստացել տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական կամ սահմանված կարգով ստացել է վարորդական վկայական, սակայն օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, և զրկման ժամկետը լրանալուց հետո սահմանված կարգով չի վերականգնել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը, բացառությամբ ուսումնական վարման դեպքերի:»:

Հոդված 52. Օրենսգրքի 393-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի անալոգի կամ ածանցյալի չափը համապատասխանում է այն թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի չափին, որի անալոգը կամ ածանցյալը հանդիսանում է այդ նյութը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մաս.

«8. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված առարկաները կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձն ազատվում է կամովին

հանձնած առարկաների ապօրինի շրջանառության համար սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:»:

Հոդված 53. Օրենսգրքի 396-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Պրեկուրսորների զգալի չափերը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 54. Օրենսգրքի 415-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «անձի վարակում» բառերից հետո լրացնել «կարանտին սահմանելու համար հիմք հանդիսացած վարակով» բառերը.

2) 2-րդ մասի 2-րդ կետում «երկու կամ ավելի անձանց վարակում» բառերից հետո լրացնել «կարանտին սահմանելու համար հիմք հանդիսացած վարակով» բառերը:

Հոդված 55. Օրենսգրքի 444-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածում առանձնապես խոշոր չափ է համարվում 1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը):»:

Հոդված 56. Օրենսգրքի 445-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:»:

Հոդված 57. Օրենսգրքի 447-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «չձեռնարկելը» բառից հետո լրացնել «կամ ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) մասին որոշում չկայացնելը կամ ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը չապահովելը» բառերով.

2) լրացնել նոր՝ 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Համայնքի ղեկավարի կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում չկայացնելը կամ իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը չապահովելը, որը կատարվել է նույն արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից և խախտումները վերացնելու վերաբերյալ ուժի մեջ մտած վարչական ակտը չկատարելուց հետո՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժակետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:»:

Հոդված 58. Օրենսգրքի 448-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 448. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև ինքնակամ շենքերի, շինությունների կառուցումը չդադարեցնելը և անօրինական կառույցները չքանդելը**

1. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանի կամ քաղաքաշինական նորմի կամ կանոնի էական խախտումով շենքի, շինության կամ այլ կառույցի կառուցումը կամ վերակառուցումը կամ տեղադրումը չդադարեցնելը կամ անօրինական կառույցը չքանդելը կամ չապամոնտաժելը կամ առանց թույլտվության շինարարության կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը, որը կատարվել է նույն արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանփակմամբ՝ մեկից երեք տարի ժակետով, կամ կարճաժակետի ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժակետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:»:

Հոդված 59. Օրենսգրքի 456-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) շահադիտական դրդումներով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:»:

Հոդված 60. Օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասից «որը համագործակցում է իրավասու մարմինների հետ, » բառերը հանել:

Հոդված 61. Օրենսգրքի 499-րդ հոդվածում «ազատազրկմամբ՝» բառից հետո «առավելագույնը երկու տարի ժամկետով» բառերը փոխարինել «առավելագույնը երկու տարի ժամկետով:» բառերով:

Հոդված 62. Օրենսգրքի 506-րդ հոդվածի 5-րդ մասում «ազատազրկման» բառը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 63. Օրենսգրքի 551-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենսգրքով նախատեսված՝ անչափահասների վերականգնողական հաստատությունում տեղավորելու և հաստատության ծրագրերին մասնակցելու վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան՝ անչափահասների վերականգնողական հաստատություն ստեղծելուց և շահագործման հանձնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մաս.

«6. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» օրենքով կարող են սահմանվել սույն օրենսգրքով նախատեսված առանձին իրավահարաբերությունների ուժի մեջ մտնելու այլ ժամկետներ:»:

Հոդված 64. Օրենսգրքի Հավելված N1-ում՝

1) վերնագրում «հանցագործությունների» բառը փոխարինել «հանցանքների» բառով.

2) «Հոդված 221. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը» պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 221.1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը»:**

Հոդված 65. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-199-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-232[89]-11.04.2022-ՊԻ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջին ընթերցում

Կ-232[89]-11.04.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մայիսի 5-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «ազատության սահմանափակումը,» բառերը հանել:

Հոդված 2. Օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունը «ժամկետից» բառից հետո լրացնել «կամ նշանակված պատժատեսակն ավելի խիստ է ուժի մեջ մտած օրենսդրությամբ նախատեսված առավել խիստ պատժատեսակից» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 11-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո չգտնվող կամ տարբերանշանը չկրող բաղաքացիական օդանավի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով.

«3. Հայաստանի Հանրապետության ռազմական կամ կառավարական նավի կամ պետական օդանավի կամ այլ թռչող սարքի (ռազմական, ոստիկանական, մաքսային) վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը, անկախ դրա գտնվելու վայրից, լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 13-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մասով.

«4. Սույն հոդվածով նախատեսված կանոնները կիրառվում են համապատասխան դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելուց հետո:»:

Հոդված 35. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասում «, 266-րդ հոդվածով, 341-րդ հոդվածի 1-ին մասով կամ 342-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել « կամ 266-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում «ազատազրկման» բառը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության այն դեպքում, երբ չի գիտակցել իր արարքի հակահրավականությունը և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել դա, ինչպես նաև այն դեպքում, երբ չի նախատեսել իր արարքի վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և տվյալ իրադրությունում պարտավոր չէր կամ չէր կարող նախատեսել դա:»:

Հոդված 8. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում «հանցանքը համարվում» բառերից և «կատարված հանցանքն» բառերից հետո «առանձնապես ծանր» բառերը փոխարինել «առանձնապես ծանր կամ ծանր» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 6-րդ մասում «զրկելն», «տարածվում է» և «սկսվում է» բառերից հետո «ազատազրկման» բառը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 104. Օրենսգրքի 62-րդ հոդվածում՝

1) 4-րդ և 5-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է դատապարտյալի նկատմամբ նշանակված հիմնական պատիժը կրելուց հետո: Այն դեպքում, երբ արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով համաձայնություն է ձեռք բերում դատապարտյալին պատժի մնացած մասը կրելու նպատակով իր քաղաքացիության երկիր փոխանցելու վերաբերյալ, ապա օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտը համարվում է ի կատար ածված դատապարտյալի փոխանցումն իրականացնելու մասին արդարադատության բնագավառում պետական լիազոր մարմնի ծանուցումն ստանալուց հետո: Այն դեպքում, երբ սույն օրենսգրքի 84-րդ կամ 85-րդ հոդվածով սահմանված կարգով կայացվել է անձին պատժից ազատելու վերաբերյալ որոշում, օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է փորձաշրջանն ավարտվելուց հետո: Սույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված

դեպքերում անձին պատժի հետագա կրումից ազատելու, ինչպես նաև սույն օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասով կամ 88-րդ հոդվածով սահմանված կարգով անձին հիմնական պատժից ազատելու դեպքում օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը կատարվում է պատժի հետագա կրումից կամ պատժից ազատելուց հետո:

5. Օտարերկրյա քաղաքացին կարող է վտարվել իր քաղաքացիության պետություն կամ այն պետություն, որտեղ վերջինս մշտապես բնակվում է: Վտարման երկիրը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով դատապարտյալի կարծիքը:».

2) լրացնել 6-րդ և 7-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Այս պատժատեսակը չի կարող նշանակվել՝

1) փախստականի կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած անձի նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,

2) չվերադարձելիության սկզբունքից օգտվող օտարերկրյա քաղաքացու նկատմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի,

3) մինչև հանցանք կատարելը Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում հատուկ կացության կարգավիճակ ունեցող կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող անձի հետ ամուսնացած կամ խնամքին Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա ունեցող անձի նկատմամբ,

4) եթե անձը վտարվող պետության տարածքում քրեական հետապնդման է ենթարկվում այնպիսի արարքի համար, որը կարող է պատժվել մահապատժով,

5) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է հետապնդման ենթարկվել ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար, կամ

6) եթե հիմնավորվում է, որ վտարվող պետության տարածքում անձը կարող է ենթարկվել խոշտանգման կամ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

7. Հայաստանի Հանրապետությունից չեն կարող վտարվել այն անձինք, որոնց նկատմամբ նշանակվել է սույն հոդվածով նախատեսված պատիժը, սակայն մինչև պատժի կատարումը դատապարտյալը ձեռք է բերել փախստականի կամ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացածի կարգավիճակ, կամ նրա նկատմամբ հաստատվել է չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:»:

Հոդված ~~5.~~**11.** Օրենսգրքի 63-րդ հոդվածի 5-րդ մասում «տուգանքի» բառը փոխարինել «սույն օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տուգանքի» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 64-րդ հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Սույն հոդվածի իմաստով պատժից խուսափող է համարվում այն դատապարտյալը, որը երկու և ավելի անգամ խախտել է դատարանի սահմանած արգելքը:»:

Հոդված ~~6~~**13.** Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում «Ազատազրկման» բառը փոխարինել «Ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 14. Օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասում «եթե դա կապված չէ ազատազրկման հետ» բառերը փոխարինել «բացառությամբ ազատազրկման ձևով վերջնական պատժի» բառերով:

Հոդված 15. Օրենսգրքի 82-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մասով.

«5. Նախկինում սույն հոդվածով նախատեսված հիմքով քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից:»:

Հոդված 16. Օրենսգրքի 83-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «անձին որպես մեղադրյալ ներգրավելու» բառերը փոխարինել «անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու» բառերով:

2) 10-րդ մասում «հանցագործություններ» բառը փոխարինել «հանցանքներ» բառով:

Հոդված ~~7~~**17.** Օրենսգրքի 86-րդ հոդվածի վերնագրում «Պատժի» բառը փոխարինել «Հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի պատժի» բառերով~~:~~.

Հոդված 18. Օրենսգրքի 87-րդ հոդվածի 5-րդ մասում «բժշկական հանձնաժողովը» բառերը փոխարինել «բժշկական կամ հոգեբուժական հանձնաժողովը» բառերով:

Հոդված 19. Օրենսգրքի 90-րդ հոդվածի 7-րդ մասում «հանցանքի կատարման» բառերը փոխարինել «մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու» բառերով:

Հոդված 20. Օրենսգրքի 93-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածության մարման կամ վերացման պահը: Դատվածության վերացման համար հիմք են համաներման մասին օրենքը, ինչպես նաև արարքի ապաքրեականացումը:»:

2) 5-րդ մասի 2-րդ կետում «ազատազրկման» բառը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 21. ~~**Հոդված 8.**~~ Օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունը հանել:

Հոդված 22. Օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասում «եթե դա կապված չէ ազատազրկման հետ» բառերը փոխարինել «բացառությամբ ազատազրկման ձևով վերջնական պատժի» բառերով:

Հոդված 23. Օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի «ազատազրկման» բառերը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 24. Օրենսգրքի 119-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մասով.

«5. Անձը որոշակի վայրեր այցելելու արգելքի պահանջները կատարելուց խուսափող է համարվում, եթե երկու և ավելի անգամ խախտել է դատարանի սահմանած արգելքը:»:

Հոդված 25. Օրենսգրքի 120-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից «պետության սահմանած» բառերը հանել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մաս.

«5. Անձը հոգեբանական օգնություն ստանալու պարտականության պահանջները կատարելուց խուսափող է համարվում, եթե երկու և ավելի անգամ չի կատարում դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «137-րդ հոդվածի» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 137-րդ հոդվածի» բառերով:

Հոդված ~~**9.** Օրենսգրքի 153-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերով.~~**27.** Օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասում «հուզմունքի վիճակում (աֆեկտ)» բառերը փոխարինել «հուզմունքի (աֆեկտի) վիճակում» բառերով:

~~«5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների~~

Հոդված 28. Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում «իր» բառը փոխարինել «իրենից ծնված» բառերով:

Հոդված ~~կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձանց կողմից «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, կիրառման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիայի (սույն հոդվածում այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին հավելվածի սանդղակով սահմանված նյութեր արտադրելը, ձեռք բերելը, պահպանելը Կոնվենցիայի մասնակից պետությանը չպատկանող տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դրանք տեղափոխելը Կոնվենցիայի մասնակից պետությանը չպատկանող տարածք՝~~

29. Օրենսգրքի 166-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 166. Առողջությանը ծանր վնաս պատճառելը**

1. Մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելը, որը՝

1) վտանգավոր է կյանքի համար,

2) առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ դրա գործառույթի կորուստ,

3) արտահայտվել է դեմքի, գլխի, ականջի կամ կզակի անջնջելի այլանդակմամբ,

4) առաջացրել է առողջության բայբայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով,

5) առաջացրել է հղիության ընդհատում կամ

6) առաջացրել է հոգեկան խանգարում, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ~~չորսից ութ~~՝ երեքից յոթ տարի ժամկետով~~։~~:

~~6. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի 1-ին սանդղակում ընդգրկված նյութեր արտադրելը, ձեռք բերելը, պահպանելը, տեղափոխելը և օգտագործելը այնպիսի նպատակներով, որոնք արտոնված չեն Կոնվենցիայով (հետազոտական, առողջապահական, բժշկական, դեղագործական և պաշտպանական), ինչպես նաև վերափոխանցելը երրորդ պետություն՝~~

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ,

2) անչափահասի նկատմամբ,

3) առանձին դաժանությամբ,

4) այլ անձանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր եղանակով,

5) մի խումբ անձանց կողմից,

6) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ,

7) մերձավոր ազգականի կողմից,

8) շահադիտական դրդումներով,

9) պատվերով,

10) խուլիգանական դրդումներով,

11) այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով,

12) ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի կամ զանգվածային անկարգությունների պայմաններն օգտագործելով,

13) ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով,

14) հանցագործությունից տուժած անձի բջիջը, հյուսվածքը, օրգանը կամ կենսաբանական նյութերը կամ հեղուկները վերցնելու նպատակով կամ

15) անզգուշությամբ առաջացնելով հանցագործությունից տուժած անձի մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ~~չորսից ութ~~հինգից տասը տարի ժամկետով~~։~~:»:

~~7. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետության տարածքում Կոնվենցիայի 2-րդ սանդղակում ընդգրկված նյութեր ձեռք բերելը կամ այլ անձի տրամադրելը՝~~

~~պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով:»:~~

Հոդված 30

~~**Հոդված 10**. Օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասում «իր» բառը փոխարինել «իրենից ծնված» բառերով:~~

~~**Հոդված 11**~~. Օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասում «տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ» բառերը հանել:

Հոդված ~~12~~31. Օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասում «կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը» բառերից հետո «երկու» բառը փոխարինել «մեկ» բառով:

Հոդված ~~13~~32. Օրենսգրքի 194-րդ հոդվածի 2-րդ մասում «տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ» բառերը հանել:

Հոդված ~~14~~33. Օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասում «տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ» բառերը հանել:

Հոդված 34. Օրենսգրքի 198-րդ հոդվածում՝

~~1.~~1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են 12 տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:».

~~2.~~2) լրացնել նոր՝ 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն հոդվածի իմաստով՝ անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը:»:

Հոդված ~~15~~35. Օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետից հանել «12-ից» բառը:

~~**Հոդված 16.**~~**Հոդված 36.** Օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասում «ոտնահարում է անձի պատիվն ու արժանապատվությունը կամ իրավունքներն ու ազատությունները» բառերը փոխարինել «ոտնահարում է անձի իրավունքները կամ ազատությունները» բառերով:

Հոդված 37. Օրենսգրքի 210-րդ հոդվածի 3-րդ մասը «մասնակցելուց» բառից առաջ լրացնել «մասնակցելուն կամ հանրաքվեին կամ ընտրությանը» բառերով:

Հոդված ~~17~~38. Օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասում «նվազագույն աշխատավարձի եռապատիկը» բառերը փոխարինել «3000 Հայաստանի Հանրապետության դրամը» բառերով:

Հոդված ~~18~~39. Օրենսգիրքը լրացնել նոր 221.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 221.1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը

~~1)~~1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից խոշոր չափով չկատարելը կամ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրում քարոզչության նպատակով ձեռք բերված ապրանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չներառելը (եթե դա ձեռք է բերվել կամ մատուցվել է անհատույց կամ շուկայական արժեքից ցածր գնով կամ մինչև նախընտրական հիմնադրամի կամ հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամի ձևավորումը), որը կազմել է խոշոր չափ՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

~~2)~~2. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը կամ հանրաքվեի քարոզչության հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը քվեարկությունից հետո օրենքով՝ ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ ընկած ժամանակահատվածում չներկայացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

~~3)~~3. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ խոշոր չափ է համարվում 10 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը:»:

Հոդված ~~19~~40. Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասում «նվազագույն աշխատավարձի հազարապատիկը» բառերը փոխարինել «1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը» բառերով:

Հոդված ~~20.~~ 41.Օրենսգրքի 236-րդ հոդվածի՝

1) վերնագրում «հարկադրելը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» բառերը.

2) 2-րդ մասում «միջոցով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» բառերը:

Հոդված 42. Օրենսգրքի 242-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «Երեխայի առքը կամ վաճառքը» բառերը փոխարինել «Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը» բառերով:

Հոդված 43. Օրենսգրքի 284-րդ հոդվածի 4-րդ մասում «մինչև 5» բառերը փոխարինել «5 միլիոնից մինչև 10» բառերով, իսկ «շահույթ՝» բառից հետո «5» թիվը՝ «10» թվով:

Հոդված 44. Օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասում «իրավունք ունեցող անձի,» բառերից հետո լրացնել « ֆիզիկական անձի,» բառերը:

Հոդված 45. ~~**Հոդված 21.**~~ Օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասում «մարմնի կողմից» բառերից հետո լրացնել «սեփականությամբ տվյալ ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը կամ իրավաբանական անձին պատկանող գույքը ոչնչացնելու, ակնհայտ կեղծ կամ շինծու գործարքներ կնքելու կամ այլ եղանակով» բառերը:

Հոդված ~~22~~46. Օրենսգրքի 289-րդ հոդվածի՝

1) վերնագրում «կամ օգտագործելը կամ դրանք իրացնելը» բառերը փոխարինել «կամ դրանք օգտագործելը կամ իրացնելը» բառերով.

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Իրացման նպատակով կեղծ ակցիզային դրոշմանիշ կամ դրոշմապիտակ պատրաստելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, ձեռք բերելը կամ դրանք օգտագործելը կամ իրացնելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը բսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Հոդված 47. Օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասում «5» թիվը փոխարինել «10» թվով, իսկ «15» թիվը՝ «20» թվով:

Հոդված ~~23~~48. Օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Խուլիգանությունը՝ հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելը, որը դրսևորվել է անձին

ստորացնելով կամ հայհոյանքներով կամ անպարկեշտ արտահայտություններով կամ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ մարդկանց անդորրը խախտելով կամ նույն եղանակներով հանրային միջոցառումը, արարողությունը խափանելով կամ հասարակական նշանակության օբյեկտի, հիմնարկի կամ կազմակերպության բնականոն աշխատանքը խոչընդոտելով՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը բսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Հոդված 49. Օրենսգրքի 310-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի իմաստով՝ գույք է համարվում սույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված գույքը:»:

Հոդված ~~24~~50. Օրենսգրքի 326-րդ հոդվածում՝

1)1-ին մասում «երկու» բառը փոխարինել «մեկ» բառով.

2) 2-րդ մասում «մեկից երկու» բառերը փոխարինել «առավելագույնը երկու» բառերով.

3) լրացնել նոր՝ 3-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետևանք՝

պատժվում է կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:»:

Հոդված 51. Օրենսգրքի 344-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 344. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելը կամ այդ անձի կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը**

1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրասպորտային միջոց վարելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

2. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոց վարելու իրավունք չունեցող անձի կողմից հարբած (ոչ սթափ) վիճակում տրանսպորտային միջոց վարելը կամ այդ անձի կողմից սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելը կամ խուսափելը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված, եթե նա օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, և զրկման ժամկետը չի լրացել:

4. Սույն օրենսգրքի իմաստով՝ անձի՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը համարվում է կասեցված, եթե նրա՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցվել է, և կասեցման ժամկետը չի լրացել:

5. Սույն օրենսգրքի իմաստով՝ անձը համարվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող, եթե նա սահմանված կարգով չի ստացել տվյալ կարգի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի վարորդական վկայական կամ սահմանված կարգով ստացել է վարորդական վկայական, սակայն օրենքով սահմանված կարգով զրկվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, և զրկման ժամկետը լրանալուց հետո սահմանված կարգով չի վերականգնել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը, բացառությամբ ուսումնական վարման դեպքերի:»:

Հոդված 52. Օրենսգրքի 393-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի անալոգի կամ ածանցյալի չափը համապատասխանում է այն թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի չափին, որի անալոգը կամ ածանցյալը հանդիսանում է այդ նյութը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մաս.

«8. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված առարկաները կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձն ազատվում է կամովին հանձնած առարկաների ապօրինի շրջանառության համար սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:»:

Հոդված 53. Օրենսգրքի 396-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Պրեկուրսորների զգալի չափերը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված ~~25~~54. Օրենսգրքի 415-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «անձի վարակում» բառերից հետո լրացնել «կարանտին սահմանելու համար հիմք հանդիսացած վարակով» բառերը.

2) 2-րդ մասի 2-րդ կետում «երկու կամ ավելի անձանց վարակում» բառերից հետո լրացնել «կարանտին սահմանելու համար հիմք հանդիսացած վարակով» բառերը:

Հոդված ~~26~~55. Օրենսգրքի 444-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով.

«3. Սույն հոդվածում առանձնապես խոշոր չափ է համարվում 1 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը):»:

Հոդված 56. Օրենսգրքի 445-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:»:

Հոդված 57. Օրենսգրքի 447-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «չձեռնարկելը» բառից հետո լրացնել «կամ ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) մասին որոշում չկայացնելը կամ ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը չապահովելը» բառերով.

2) լրացնել նոր՝ 2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Համայնքի ղեկավարի կողմից պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում չկայացնելը կամ իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը չապահովելը, որը կատարվել է նույն արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից և խախտումները վերացնելու վերաբերյալ ուժի մեջ մտած վարչական ակտը չկատարելուց հետո՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ ~~առավելագույնը~~մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժակետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:»:

Հոդված ~~27~~58. Օրենսգրքի 448-րդ հոդվածը շարադրել ~~նոր~~հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 448. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև ինքնակամ շենքերի, շինությունների կառուցումը չդադարեցնելը և անօրինական կառույցները չքանդելը**

1. Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի ինքնակամ զավթումը չդադարեցնելը և դրա հետևանքները չվերացնելը, ինչպես նաև օրենքով կամ այլ իրավական ակտերով

սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ նախատեսված թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանի կամ քաղաքաշինական նորմի կամ կանոնի էական խախտումով շենքի, շինության կամ այլ կառույցի կառուցումը կամ վերակառուցումը կամ տեղադրումը չդադարեցնելը կամ անօրինական կառույցը չքանդելը կամ չապամոնտաժելը կամ առանց թույլտվության շինարարության կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը, որը կատարվել է նույն արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվության կիրառումից հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով–, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ ~~առավելագույնը~~մեկից երեք տարի ժակետով, կամ կարճաժակետի ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժակետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:»:

Հոդված ~~28~~59. Օրենսգրքի 456-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) շահադիտական դրդումներով՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:»:

Հոդված ~~29. Օրենսգրքի~~60. Օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասից «որը համագործակցում է իրավասու մարմինների հետ, » բառերը հանել:

Հոդված 61. Օրենսգրքի 499-րդ հոդվածում «ազատազրկմամբ՝» բառից հետո «առավելագույնը երկու տարի ժամկետով» բառերը փոխարինել «առավելագույնը երկու տարի ժամկետով:» բառերով:

~~Հոդված 30.~~Հոդված 62. Օրենսգրքի 506-րդ հոդվածի 5-րդ մասում «ազատազրկման» բառը փոխարինել «ազատությունից զրկելու» բառերով:

Հոդված 63. Օրենսգրքի 551-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենսգրքով նախատեսված՝ անչափահասների վերականգնողական հաստատությունում տեղավորելու և հաստատության ծրագրերին մասնակցելու վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան՝ անչափահասների վերականգնողական հաստատություն ստեղծելուց և շահագործման հանձնելուց հետո, սակայն ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ մաս.

«6. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» օրենքով կարող են սահմանվել սույն օրենսգրքով նախատեսված առանձին իրավահարաբերությունների ուժի մեջ մտնելու այլ ժամկետներ:»:

Հոդված ~~31~~64. Օրենսգրքի Հավելված N1-ում՝

1) վերնագրում «հանցագործությունների» բառը փոխարինել «հանցանքների» բառով.

2) «Հոդված 221. Հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը» պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 221.1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը»:**

Հոդված ~~32~~65. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-199-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը: